

# ԵՐԱՆԵՆՈՅ ՄԻՍԱՅԷԼԻ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

## ՄԵՏԻ ԿՈՂՄԱՆՑՆ ԵՒ ՔՈՍՏԻՓՈՒՆԵԱՅ ՆԱՀԱՆԳԻՆ

### Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ՔՐԻՍՏՈՍԻ

« 6 »

Քանի մը տարի յառաջ տոյն ճառին և հեղինակին վրայ՝ ուսուցիչներու թիւն մը կը հրատարակէինք թերթիս մէջ, տես Բազմ. 1906 էջ 160-6. Նոյն հեղինակէն միակ ծանօթ այս անտիպ ճառը հրատարակելով՝ մենք կը կարծինք մաքողացնել մեր ուսուցիչներու թիւնը, առիթ տալով անդրադոյն քննութիւններու: Հառտ յոյժ չահեկան է մեր հին մտտենագրութեան պատմութեան լուսարանութեան ու մաքողացման համար բովանդակած իր մէկ քանի ակնարկութիւններովը, և մէկ քանի գիծերովը՝ որոնք կը ցուցնեն բնոյթը այն հասկացողութեան՝ զոր Հայեր կազմած են մահմէտականութեան վրայ, Արաբներուն Հայաստան արշաւելուն առաջին տարիներուն իսկ:

**ԱՍՏՈՒԱԾԱԹԻՆ** նշանն երկնաւոր արեգային մերոյ մարդացելոյ, որ յերկինս ծագելոց է յետ լուսաւորացն լուծանելոյ՝ յառաջնում կամ յութեորդում աւուրն, գործարան կամաւոր չարչարանացն, մեզ տուաւ պարգեւ յանապականութիւն ընդդիմահար մարմնով՝ զմարմնաւորն, իրբեւ զրովանդակն ընկալաք՝ որ ի յերկրէ և ի ծովէ ի վեր բղիսեալ, պատուականագոյն նիւթովը ժողովեցաւ: Զի հաճեցաւ բնակիլ ի նոսա. ձեւացուցեալ արուեստաւորացն ըստ նմին նմանութեան զբազում աւուրց ցանկութիւնն սնոտի. և զկամս շրթանցն լցեալ, որ քննեն զսիրտս և զբրկամուսս, արժանաւոր առնելով աւրհուութեան. քաղցրութեամբ դնելով ի զլուս մեղուցելոցս ամենագեղեցիկ պսակս, զփայտն որ յականց պատուականաց դնի ի զլուս թագաւորաց. քան զծիրանեացն ծաղիկ՝ որ ի խորոց ծովէ վերաբերեալ լինի, և չէ համեմատեալ ընդ ումեք: Զի արարածք զգայինք և իմանալիք ի խոնարհման նուազեալք՝ առաւելութեամբ, որով հակառակն բեւեռեցաւ և ջարջախեցաւ զլուս վիշապին. որով լուծան մեղք և բարձաւ մահ, յորոյ վերայ ձեռագիրն պատառեցաւ. և

նզովքն ի հակառակն փոխադրեցաւ, և կենանք թագաւորեցին, որով երկինք բացան զոր փակեաց նախահայրն. և հրեշտակք ի վերայ երկրի շրջեցան:

Խաչն կանգնեցաւ և պատկերք կործանեցան. իսաչն հաստատեցաւ և բազինք սասանեցան: Խաչն ծագեցաւ նշանակեալ ի մեզ զլոյս երեսաց: Սորին լծորդան՝ ուրախութեամբն մտաւոր, և խաւարն իմանալի՝ յորում նստէաք, փարատեցաւ, զոր նշայիտս աւետարանեաց՝ փայտս մահու և դատապարտութեան, համարձակութեան և կենաց և մեզ շնորհեցաւ, և կառք ստուածային՝ որով հեծելութիւն միածնին որ արշաւակի գայր յերգովայ, կարմրագեցստեալ թանձրութեամբ արեամբ մարմնոյ, տիեզերական փրկութիւնն կատարեցաւ: Սովաւ ցնծան արիւնադիրքն, ծանուցեալ զփաստս յառաջագոյն: Սմա երկրպագեցին տեսանողացն բազմութիւնքն, յորոց ոմն՝ երգեցող և հոգեւորացն պարտ յորդորիչ, հրամայէ երկրպագել պատուանդանի ոտից տեսոն Աստուծոյ ի բարձրացուցանելն: Սովաւ ցնծան խաչակիր առաքելոցն դասք՝ յորոց ոմն ասէ թէ քաւ լիցի ինձ ի հրէականն պարծել, բայց միայն ի խաչն տեսոն մերոյ Յիսուսի

փրիստոսի: Յաղագս սորա կատարեցան յաղթագզեաց վկայքն, զկնի ընթացեալ առաջին վկային, որ վկայեաց ճշմարտութեանն առաջի պնտացույ Պիղատոսի. և ոչ զոր յաղեցին դատակնիք գտեառէն մերմէ և զՊիղատոսէ, առ այլով հիւպատոսիւ չարչարանացն զու: Չսա արհնարանեցին երրորդ դասը եկեղեցոյ՝ բանիւ և երգով, շարժեցեալք ի հոգւոյն՝ զժողովս քրիստոսասէրս: Սա կորուսեղոցն՝ անուամբ փիլիսոփայիցն յիմարութիւն, որը զանձինս առ իմաստունս ունէին, և զգարչելի աստուածան իւրեանց բեւեռեալ ի փայտի, համբաւեցին կամս. թայց փրկելոցս և հրաժարելոցս ի գաղտնեաց ամաւթոյ զաւրութիւն մեծ և ապաւէն անպարտելի փախուցելոց ի բանասարկուն: Հրէից զայլ խաղութիւն, որը կազացան ի շաղագ նախարարչին արդարութեան, և աւրինացն արդարութեամբ կարծէին կեալ, որը ի ծնծոյն հայեցան՝ և զպտուղն ոչ ծաննան. և առ լպպտերն դիպեցան՝ և առ քաղցրանանչ ճառագայթ արեգականն՝ ոչ հայեցան. որ տապանական և աստուածազիծ տախտակոցն պայճառացեալք էին, որ ճածկեցան՝ տեղի տուեալ փրագս խաչին, և հաշտարանան խնկոցն քրովբէից հովանացեալ, և լուսազարդ ստեղն պայծառ աշտանակին բարձրութեամբն, որ խորտակեցաւ ի բարելացոց կամ յայոց բռնաւորաց. վասն զի գալոց էր աշտանակն ճշմարիտ ի կիպարիս փայտէ, յորոյ վերայ հուր աստուածութեանն մարմնով վառեցաւ. ծագեալ չարչարանաւն լոյս ամենայն աշխարհի. և զաշտանակն ծիրանաներկեալ երանկովքն, որ ի կողիցն բըղխեաց: Ոչ անբանիցն արեամբ սրկեալ՝ որպէս պարկեշտ խորանին, կամ կարմրով և ծիրանով և կապտով ծածկեալ, այլ փրկութեան աղբրոց՝ արեան և ջրոյ, ի միողէ յերակէ յառաջ եկեալ՝ տիգով զինուորին կայլակացեալ, որով մարբեցաւ նշանն տէրունեան. ի դաստակս ձեռաց՝ ի ծայրս ոտիցն էր վարեալ հեղուսիւք ընդ փայտին, որով չորեքկին որոշմամբ է գիտելի, հուպ ի հեռի գոյացութեանն,

և ի հեռի կատարմանէն և յիմացական զարութեանէն:

Արդ՝ փայտ անուն՝ մերձաւոր զոյացու թիւն է ի սեռից միջոցաց. իսկ եղեւնափայտն հեռաւոր գոյացութիւն, որ է տեսակագունիցն ի խոնարհ: Իսկ խաչն ի հեռի կատարմանէն, այլ քան զմատուտն ձեռով մարդոյ առեալ, իսկ իմանալին վասն երկնաւոր զօրութեանն որ ի նմա, զի տեսարան սորա մահու է զգայութեամբ, իսկ խորհրդականութիւն սորա, վերաբերէ զմեզ առ կենդանութիւնն մշտնջենաւոր: Եւ արդ աւրինաւն յիշատակեալք լիցին. սակաւքն ի բազմութեանէն զոր զրեաց հոգին սուրբ, յորժամ ընդ աստուածան միաւորեցաւ և ծանուցաւ, և ունի՝ այսպէս:

Խաչն փայտ ճշմարտութեան բարւոյ և չարի, ծառ յաւիտենական կենացն՝ անուամբ և իրաւք: Սուր բոցեղէն պահել զճանապարհ իմանալի փափկութեան դըրախտին. յորժամ յարեկելից ի սրովբէից առաւել փայլիցէ. ոչ սուր՝ տէգ նիզակի, այլ միմիայն նահատակեալ անմարմին էութեամբ, յորժամ երկինք զաւարեցին, և երեւեցին փայլատակունք նորս տիեզերաց. տապանն քառակուսի փորեքկուսի տիեզերս փրկեաց՝ ի մեղացն հեղեղէ: Աշտարակ ընդդէմ Քաղանայ խառնակութեանն. որ զտիեզերս ի մի բարբառ անծեալ՝ ժողովելով ի փառատրութիւն Աստուծոյ հարս: Եւսո կախարանի գառինն՝ որ բռնայ զմեզ աշխարհի, որով Արբանամ յառական ընկալաւ զխահակ զուարեացեալ արեամբ միածնին, որով ապրեցաք արժանաւորք եղեալք հայրենեացն ժառանգութեանս:

Սանդուխը հաստատեալ յերկրէ մինչև յերկինս. յորոյ վերայ տէրն Յիսուս բեւեռաւն հաստատեալ կայրն և իշանելիք հրեշտակաց յերկրո. և ելանելիք մարդկան յերկինս. արձան ընդ արձանի՝ ի նահապետէն ընդ այս անծեալ իւրով տեղի որոշեալ և վէմ նշանակեալ. որ կանխաւ ծանեաւ զմերս. կամ թէ մերովքս պատուեցաւ: Գաւազանքն նկարեղէնք՝ որ անազանան ծնանին խայտախարիտսն՝ պէս

չնորհաւը յեկեղեցւոյն Յակոբայ, որ մար-  
մնոյ զգեցմամբ՝ խարհաց զիմանալին Լա-  
րան, զողացեալ զմիտան՝ և առեալ զՀա-  
քէլ, որք ի հեթանոսաց եկեղեցիք. և զԼիա՝  
որք ի Հրէից, փախուցանէր ի հայրենեացն  
մոռանալ. նոցա զժողովուրդն՝ և զտուն  
հաւրն իւրեանց, զի ցանկացեալ էր զեղոյ  
նոցա: Վասն այսորիկ հովուէր հովիւն քաջ,  
որ զանձն իւր դնէր ի վերայ ոչխարացն:  
Գինդ և զաւազան և հաստատութիւն խոր-  
հրդազոծու ծննդեանն Թաւարայ, Եկեղեց-  
ւոյ՝ որ զառաջինն երկրորդ տանէր զմաս-  
նաւոր աւրինական, և զերկրորդն առաջին  
զբովանդակ ծանուցեալ ճշմարտութիւնն,  
յիրագործութենէն առեալ զանունն:

Խաչն՝ զաւազան ի ձեռին, կամ բար-  
ձեալ ի վերայ ուսոց աւրինաբրին, որ  
պատուիրան նոր տայր սիրել զիմեանս,  
որով զիւթականքն պարտեցան: Սիւն լու-  
սոյ առաջնորդեալ մեզ, որ յիւրայէլ ա-  
նուն փոխեցաք՝ աստուածատեսագոյնք  
լեալք, որով անդունդք պատասեցան ամ-  
բարշտութեանցն խորք. և բռնաւորն խո-  
րաւքն ծածկեցաւ. և որ ընդ նորին իշ-  
խանութեամբ են հակառակ զաւրութիւնքն,  
որոյ ձեռովն Ամադէկն պարտեցաւ, և ար-  
ձանն կենդանի աղբերացաւ. ակն պա-  
տուական ի ձեւ աղիւսոյ՝ ընդ որ բեւե-  
ռաւք միացան ոտք միածնին ի մեծ և ի  
նոր տեսարանին, որով կերակրեցաք և  
արբաք: Փայտ ցուցեալ, որով մեռոյց զբաւ-  
նութիւն միացա, և քաղցրացաւ դառնու-  
թեանս պարգեւք: Եւ ձ կարեալ հակա-  
ռակապատկեր խաչելոյն մերոյ. այլ ոչ  
աւրինակ զձեռն միայն ունելով, խայտա-  
ռակեալ և նշանակեալ ի բարձուս: Սուր  
աւտար՝ որով թլփատեցաք զանձեռագործ  
թլփատութիւնն, ի բաց հասանելով ըզ-  
մորթն մեռեալ՝ զոր յետ աստուածային  
պատկերին մերկանալոյն զգեցաք: Փայտ  
երկնիդ, յորում կարեցաւ թագաւոր մեր  
ի պատերազմին. Յետուայն մարմնովն՝ ժո-  
ղովրդեամբ խաչահանուացն: Գաւազան  
պատուականագոյն՝ որով յերիցովայ ըզ-  
ծընծոցն որոշէր ի պողոյն, որպէս յաւե-  
աարանին հեծանոցին մաքրութիւնն, այրել

զթեթեւամիտան՝ և ժողովել արմտեացն  
յերանելի յշտեմարանն: Խաչն ամենա-  
սուրբ, փայտն ամէնաւրհնեալ, ցից խո-  
րանի եկեղեցւոյ, որով ըստ Յայելայ՝ նա-  
խատիպ ցուցակին ջարհեցին կանայք պա-  
տուականք կուտութեամբ և ամուսնութեամբ  
և այրութեամբ կրանաւորեալք առմամբ  
հաւատոց՝ զաներեւութին Սիտարայ զգը-  
լուխն, արհամարեալ զբազմագոյն երանգն  
պարանոցի զգեստու՝ զգանազան հեշտու-  
թեանցն խաբէութիւնն:

Սա՛ խոչ ընդ ակն ոգւոյ աչաց, որ իբ-  
րեւ զԵփթայայ, զարշելի պատարագաւք  
բանից և անմաքուր զոհիւք խոստովանու-  
թեամբ նոր սպանմամբ զմեծին դաւանին:  
Յուպ՝ և քար, որով ի վերայ ընթացաւ  
մարգարէն Յիսուս, և սատակեաց զամ-  
բարձեալն հպարտութեամբ, և զկազմածն  
նորա առեալ՝ աւար հարկանէր զտուն հը-  
գաւրին, որ ուսոյց զձեռս մեր ի պատե-  
րազմ հանդերձ լծորդաւն, մատաքը ճա-  
կատամարտել ընդ իշխանութիւնս և ընդ  
պետութիւնս: Գաւազան զաւրութեան ի  
Սիրոնէ, յորոյ վերայ թագաւորեաց՝ որ  
երգեաց մարգարէիւն. ես կացի թագաւոր  
ի վերայ Սիրոնի լերին սրբոյ նորա: Յուպ  
հովուական և զաւազան միութարութեան,  
և սեղան ուրախութեան վայրիւք դալա-  
րաւք, ի չարութենէ առաջնոյ զոր քա-  
ջալերէն զմեզ: Սյլ ոմն տեսանալ ասէ.  
քաջալերեցաք երէ վայրի՝ զի դալարացան  
զաշտք անպատիւ, և ծարաւեալ անա-  
պատն ծաղկեցէ և ցնծացէ հանգստեամբ  
ջրոյն յաշխատութենէ ծանրութեան մե-  
ղացն՝ բաժակաւն անապականութեան,  
Փայտ կենաց՝ որով իմաստունն որ ի Մա-  
րիամայ զկեանս փոխարկեալ ի մահ, վե-  
րբստին այսրէն դարձուցանէ շնչին փայ-  
տին որով անկանէին, և կայ հաւատա-  
ցեալ ընդ ծով աշխարհիս, յորում որջա-  
ցեալ զազանք մեծամեծք՝ և մանունք ճե-  
ւեղիկը և այլք ընդ այսս չարութեան  
Խաչն փրկական աստուածակալք աթոռ  
ամբարձեալ՝ որ ի կղզիս կանգնեցաւ նը-  
շան, զտիեզերս ժողովեաց ի ծագումն լու-  
սոյ երկնաւոր փառացն իւրոց, որ ի բար-

բարրուսաց եւ ի սկիւթացւոց եկեղեցիք կանգնեցան, եւ ի մեռելութենէ ջուրց մուրուսեանն ի վեր ելեալք հաստատեցան յաստուած հաւատովք:

Գաւազան ընկուզի, որով դատի մարգարէն հեթանոսաց մանուկն Յիսուս ըզթշնամիսն՝ որ ի գաւազանին, զորս որբայ երանելին Պաւղոս՝ յոթամ ի միասին եկեացն զործովքն. և զործն և զործարանն, և առ որ զործն յաշիկ ատենին: Գարձեալ այլ գաւազանք ի միում փնջէ, որ կապեաց որդին մարդոյ որ էջն յերկնից, զրեալ է զերկաքանչիւր կողմանն հաւատացեալ ի նմա, զոր աւրինակ էջեկիս՝ զՅուդա և զիսրայէլ: Եւ դարձեալ այլ գաւազան ատեալ որ տնտանեցաւ զեղեցիկ, ոչ ընկեցեալ յերկիր. իբրեւ զվեճակ ժառանգութեանն Յակորայ, ցրել զիսրայէլեացն ուխտ, այլ պահել զհաւատոյն գաւանդ՝ ջրիստոնեայ անուամբ զուարտացեալ, և երկնաւոր առաքինութեամբ զեղեցիկացեալ, և որ նախ քան զայն էր, նետ փրկութեան ընդդէմ իմանալի աւորոյն, զոր առեալ իսրայէլի՝ որ յԱստուածածին կուսէն ուղղեաց ձեռամբ Երածելովք, բացեալ զպատուհան մտացն՝ միշտ առ արեւելս հայել, զոր ի թագաւորաց ընկալեալ կոտանդիանոսի սրբոյ և այլոցն, ձգեցին առ ասորեստանեայտն մինչև ի սպառ հարկանելով զնոսա. և ոչ իբրեւ զպառաւատսն՝ զհակառակն մեզ կատարեալ, որ զենլով զփորոտիսն, զխաչն պատկեալ ցուցանէր: Եւ այս զինչ զարմանալիք, զի և անմացուր այսն միջաւրէական, ի կերպարանս փոխարեւի բազում անգամ ի հրեշտակ լուսոյ. և նովին կերպարանան Մամուէլ ձգեալ յերկրէ, ինուէ զինդիրն որովայնի բանին Աստուծոյ, և բազում ատակուք բարձրելովք մարգարէանայ: Եւ աւրն մեծ՝ որ յարձակեցաւ ի վերայ վիշապ աւձին փախուցելոյ, զոր կոխել հրաման ընկալաք: Սուր կրկասայրի յարիւն միածինն կարծրացեալ, զոր ետ ի ձեռս մեր՝ առնուլ հաստեցումն ի հեթանոսաց. զորս ընդ մեզ զործեցին ի սկզբան հանեալ ի կենաց և ի բարոս:

Թեանց դրաստին, որպէս մակարայեցւոցն ընդդէմ Անտիոքայ:

Սա՛ Միգանոս արձակեալ արմատովք և ոստովք յարեւելս, յառաջին անկիւն երկրի, ոչ մահասկիզբն պտղաւ, այլ է՛ն ընծայ բարունակ խնկարեր: Վկայէ և աւտարտի ոմն յաղոս գնարտս՝ կոչելով՝ որ յարեւելեան կողմանէ, զոր ասէ թէ յա՛լ կողմ զնացեցա ի տիւ արեգականն. և թէ յաճեակ՝ յերեկ կոյս ի խրթինն և յարեւմուտս ի սահմանակալ կիսագնդին մտիցա արեւու վասն որոյ Հերակլ, ի ծովայնոյ լերկացեալ, որպէս ասեն, զլիսու, երկկորեայ առեծ անուանեցաւ, և ի հարաւային կողմն՝ յանձուկ բոլորակն և յայրեցեալ գաւառին, կազմ գաւառեաւն, և յերկստուերն ծովու և ցամաքի, և ի հիւսուի որ ընդ երկնից բարձրութեամբն և նուսումս աշոյ կոչի. որ կոչի գաւառացեալ և անձուկ, որ կանգնեցաւ նախ ի կիպարիս փայտէ, ի իրբան՝ բոլորակի աշխարհիս, և բազմապատիկ նիւթաւք անեալ ընդ տիեզերս, ոչ զոր արտաքինն զրեցին զԱրարիս փառաւոր անուամբ, թէ պէտեւ նա ընկալաւ յետոյ. ասէ՛ Չոզայ յԱրարիս:

Եւ արդ ի շէնս և յանապատս, ի քաղաքս և ի գեղոս, ի տանք թագաւորաց՝ և ի սենեակս թագուհեաց, ի գոհնս և ի ճապարհս, ի ծովու և ի ցամաքի, զի մի լիցի տեղի պետութեանց՝ և իշխանութեանց

1. Նորայր իրաւամբ գծուած բառերը կը սըրբագրէ աշոյ հաւաւ Ամբող խօսքը տնտուած է Հովնորոսէ (իլիական ժԲ) զոր անուղղակի ճանչցել է ճառիս հեղինակը Փիլոնի միջոցաւ որ կը գրէ (Միտելութիւն տպ. Վեներիկ 1826, էջ 5) «Վկայէ և քերթողն աշոյ հաւա կոչելով զայնս որ յարեւելից կողմանէն. և ձախոյ կողմանն զայնս որ յարեւմտից կողմանէն. յորժամ ասէ. զի թէ յա՛լ կողմն զնացեցն ի տիւ և յարեգակնդ. իսկ թէ յաճեակն՝ յերեկ կոյս ի խրթինն»: Փիլոնի յերթող կոչածը Հովնորոսն է զոր Միտայէլ օտարտի ոմն կը համարի:

2. Ըստ Նորայրի իրբան տես Բագմ. 1906 էջ 318:

խաւարի: Էւ արդ ընկալցուք զխաչն, ըզհրեշտակաց երկրպագելին, և մեզ՝ երկիւղ պաշտելի, որք ի ծննդեան զպահպանութիւն, որք յամուսնութեան զպատկի շնորհս, որք յայրութեան, զմիխթարութիւնն մեծ, որք ի կուսութեան զպատկառանս. եղբարք զմիաւորութիւնն, քահանայք զձեռնադրութեանն զաւրհութիւնն, թագաւորք զսպառազինութեանն զաւրհութիւնն. իշխանք զերկրպագութիւնն. հաւատացեալք զհաւատն փրկութեան, որք ի տուրնջեան զպահպանն ի միջաւրէական դիէն, որք շրջին ի խաւարի՝ զլոյսն կենաց. որք ի կերակուրս զշայեկանութիւնն. որք յմպկելու զմարքութիւնն, որք ի հանգստեանն՝ զլուսապարզեւն, որք ի ճանապարհ՝ զուղեղնացութիւնն. նաւաստիք զղեկավարն, նաւակետք՝ զնաւահանգիստն խաղաղութեան. ձերունիք՝ զնեցուկն երկաքանչիւր կողմանց. երիտասարդք՝ զսրբութիւնն. կենդանիք՝ զբանն. տղայք զպահպանութիւնն. ընդունակք՝ զայլ կեանս և զբան. զի և անասուն կենդանեացն նովաւ բժշկութիւն է. որ և վաղճանեցոյն է կնիք. նմանութեան մատանւոյ աջոյ՝ կշտապանակի տեան Յիսուսի. որ իշխանան զիւաց և Մուրա, զսա ցուցանէ մարգարէն:

Այս մեծամեծ պարգևք և բարձրագոյն՝ իաչիւն շնորհեալ լինի մեզ: Էւ արդ՝ ըզչորեակ թիւն զանձամբ ածեալք զամենայրմարն՝ զտաննեկին արմատն և զհիմն՝ ի քառասնեակն յաւելցուք. որ յիսկըքանէն՝ մինչեւ ի կատարումն Յովելայ մարգարէութեանն: Թաչն՝ հիմնն հաւատոյ: Թաչն՝ կատարումն խոստովանութեան: Թաչն՝ պսակ փառաց եկեղեցւոյ: Թաչն՝ խորանի տեան՝ բան երկնաւոր: Թաչն՝ մանկանց խորհուրդ: Թաչն վարդապետաց երգ յաղթական: Թաչն՝ աւազանին լուսոյ շնորհք: Թաչն լուսաւորութեան պարգևք: Թաչն՝ մկրտելոց զաւրավիզն: Թաչն՝ նորածնելոցն զբահ պատերազմի: Թաչն սուր երկալարի՝ ընդդէմ ախոյեանին: Թաչն, խաւար՝ աչաց բանասարկութիւն: Թաչն՝ լոյս մեծ երկրպագուաց իւրոյ: Թաչն՝ գրապանակ ամենազաւր չարչարանացն: Թաչն

մանեակ ոսկի ի պարանոցի յաղթողացն: Թաչն՝ կնիք դաւանութեան մերոյ, որ ի հայր և յորդի և ի սուրբ հոգին: Էւ արդ մի՛ ամաչեսցուք յորժամ յերկնից երեւեսցի, նախ քան զգալն մարդացելոյ միածնին, զաւրութեամբ հրեշտակաց և փառաւք բազմութեամբ սրբոց:

Էւ մի՛ կոծեսցուք զլիարկեալ ընդ ձագս երկրի: Էւ մի՛ եղիցի լուսաւորութիւն փառաց իաչին՝ մեզ խաւար արտաքին, և գետ հրոյ՝ որ յորդեալ ելանելով: Էւ մի՛ յաւելցուք ի թշնամիս իաչին. յանարժանս զտաննելով՝ որոց կատարածն կորուստ է: Այլ զղջանալով սաստէն, և սպաշարութեամբ մարքութեանն, ծաղկեսցուք ընդ հովանեաւ թեւոց նորա, զի ճառագայթք արտաքնոյ թանձրութեանն զոյացութեան նորա ի մեզ ծաւալեսցին. ընդ զբեալս ժողովել զմեզ յառաջնում յարութեանն. և ոչ մնացեալ երկրորդում: Ի վերայ թեւեւ ամպոց եկեալք և յափշտակեալք ի ճեպողացն զմեզ հրեշտակաց մերոց. որ ընդ մեզ բնակեցան մինչդեռ էաք ի վերայ երկրի: Էւ քաղաք ձեռակերտ՝ թագաւորին երկին. ուր ճեմարան և լուսութիւնն ըստ մարգարէին՝ որ ասէ. « Էւ լիցի լուսութիւն ի ճեմարանն, և խաղաղութիւն յարբունին » ըստ այլում թարգմանութեանն. ուր ճաշ և ընթրիք և հարսանիք միածնին. զգալին՝ զիմանալին դրոշմեալ: Այսմ հարսանեաց՝ զգեստու՝ արժանաւորք լիցուք, որ ոչ կերակուր և բմպելի՛ այլ ուրախութիւն և խնդութիւն և հոգի սուրբ: Էւ կէսք ընդ անմարմին զաւրութիւնն, այլ իբրև ի գեղականութենէ ի սեպհական ազատութիւնն, և ի քաղաքականութիւն փոփոսեցուք. ի նոր Երուսաղէմ զերծեալք ի թաքելոնէ, որ դատաստանի արկեալ և փառքն, և միածնողովք զումարեալք ի տուն Դաւթի. ուր ողջոյն և շինութիւն և խաղաղութիւն. ոչ ժամանակաւք փոփոխեալք ըստ իմաստնոյն հակառակ լծակցացն, անդ եղիցի աւետիք մեզ՝ ի լիութիւն խոստմանցն. ի հրամայելն ելանել ընդ առաջ. յորժամ այլ պըզակաւք անարգութեան ի իաչին:

Եկեցէտ արքայն Սողոմոն, յոր հայեսցին զստերը Երուսաղէմի յաւուր փեսայութեան. վառեալ ողորմածութեան լապտերաւքն. մի փակեցցի մեզ հարսնարանին դուռնն, և մի լսելի եղիցի մեզ ձայն ոչ գերելոյն զմեզ. որ նախ քան զտեսակ և զնիւթն՝ տեսանէ զմեզ ըստ մարգարէին. և մի՛ ապաւինեցուցեք ի զլխարկել և յարտասուելն: Ձի գիտեմ բազում անգամ քնասակարագոյն լեալ զարտասուս՝ այլ խոստովանութեամբ յառաջին և ի լուծանելի կապակցութիւնս՝ ո՛չ մնալ երկրորդին. զի և դժոխք՝ ոչ են տեղի խոստովանութեան՝ ըստ մարգարէին, հանդերձ ամենայն բարեգործութեամբ զերծցուցեք ի կապանաց և յաղտեղի պատմուճանէս. և յամալթոյն, և ի սիրոյն բաժանելոյն, և հանելոյն ի խաւարն արտաքին, յորում կիզելն ընդհակառակ, և անմահութիւնն մահուամբ, անկատարած կսկծմամբ, և ապականութիւնն անապականութեամբ. յաւիտեական այրեցածք. իբրև զգալիք՝ խորագոյն վիրաւք. և անողջանալիք իմանալովք. անդր քան զքան՝ զարմանալովք, անկասելի մարմնոյ մասանց:

Ի բաց կացէ մեզ աւտարտեացն, և հերձուածապետացն ժամանակաւ չափել փոխարկութեանցն՝ հազարամեայ առասպելացն. զի ոչ թուով երեկոց ժամանակ չափեցցի, կամ չորրեկաց ծննդոց յանցելոց. զի ոչ է յարութիւն նախակիր՝ և դարմանաւոր մարմնոյ, զաստեացս բերել զհաստատութիւն արիւնակի հեշտական կայարանին, որ ըստ առաջին կազմութեանն. և ոչ գետը բնութեամբ որոշեալք, և ճաշակաւք ըստ հասարակացն չորեքին, և ոչ գետ հրոյ բիւրապատիկ չափեալ. զի ոչ ընդ քանակութեամբ յակտեանականք, որը զնուիրական առաքեալն դնեն ի հաստատութիւն ապանելի տեսեանս. որպէս Էսայի ասէ. ապապէս ասէ տէր. և տեսան՝ չեւ խաւսեցեալ. յորմէ առեալ խարբրայ ումնն հրապուրեաց զվողջն հարաւոյ՝ թողլով մոլորութեամբ ասել զանձնէ պատգամաց յերկնից գոլ ընդունակ: Որպէս դիւազգեաց ոմն ի Պարսս իշխեաց ասել.

պատգամս բազում որթոց զպախրէից՝ ընդունել յԱստուծոյ. ի պոռնկութենէ սկիզբն արարեալ նշանացն, և ի գողութենէ, առտեղք պսակեալ ի դիւին կերպարանելոյն, որ և անբանից ասէր յարութիւն և ինքն ժանտահարութեամբ աստակեալ լինի աւրէնադիրն:

Արդ զայս գարշելի աղճատանս Պարսից և Արաբացոց մանկանցն թողցուք յուսոյ. զի ուրախ լիցին անկերպարան առասպելացն, զի մեծ ոմնն նոցա հաստատէ զայս ի հակառակելն ընդ մեզ, ի ժամանակի յորում թագաւորական իժն նոցա հերձաւ ի ծննդնէ. առ որ ասացաւ ի մէնջ՝ առաքելական ձայնիւ. թէ առաքեացէ նոցա Աստուած՝ ազդեցութիւն մոլորութեան հաւատալ նոցա ստութեանն: Ձի մեզ՝ ոչ թռչունք ի վերուստ կերակրելոյն կերակրելով, և անդէն բարձրանալով իրութեամբ յաւղուածոց և տարերցն, և ոչ պտղոց բազմագունաց և համադամաց. ի կամս ընտրութեան և վայելք անապականութեան, և ոչ կերակրոց յարինուածք՝ որակութեամբ հակառակեալք ընդ միմեանս որովք կերակրեցաւ, ի խաթանայն ասեմ իւրեանց հրապուրողան: Ամալթ վարկանելի է երկրորդել զաղտեղի հաւանութիւն նոցա, և ոչ կուսանաց գեղեցկաց թափանցաց. տեսարանք նշանաւք անբւս սանմանեալ. ոչ լուծանել չարաչար և անկատար վաւաշտութեանցն, քան զխոզս վայրենին՝ և քան զիշխարս անապատի: Քան զընտն շրջականս ի քաղաքի, և քան ըզճըննդուկ ի տանիս առաւելեալք: Ձի սոքա՝ ոչ ունին բան, զի սանձեցեցն զյարձակումն. զի անկապ միջաւք՝ և ընդյարձակութեամբ յարարածին կազմեցան: Բայց սոքա վատարագոյն քան զանբանսն և բեհին, զաստ մոլորութիւնն ի կանայս՝ անդ դնեն նախատիպ պատկերի. սկնդուկս կոչել զհամբաւեալսն իբրև զյուշկապարիկս Էւայլք որքան իւրեանցն վերաստեղծմամբն մտածութեանն, պոռնկոցս զերանելի բարութիւնս երկնից կարծելով, դիւաց խաւարային գիտքը, չարաղեւ խորհրդածութեանցն, ընդ Մինանդրեայ և

ընդ այլ չարագլուխան, որք տաւն հար-  
սանեաց մարմնոյ ասեն դարձեալ լինել ի  
վերայ երկրի, որք ըստ մտածութեանն՝ ե-  
րազովք ծփեցան. և զնոյն ճշմարիտ գրե-  
ցին. բայց զմեր արքայարանն՝ մարմնաւոր  
աչք ոչ տեսին, և ունկն ոչ լուաւ և ի  
սիրտ մարդոյ ոչ անկաւ:

Եւ արդ աղաւթիւք և պահաւք և բա-  
րեգործութեամբ խնդրեցուցուք զնա. բարե-  
խաւս ունելով՝ զծնաւոյ բանին Աստուծոյ,  
որով կենդանութիւնն ոսկւով և արծաթով  
և մարգարտով՝ և յարմար և լուսաւոր պը-  
սակաւք դրոշմեցաւ ի փափաքանաց մե-  
րոց. ասէ. նմանութիւն ոսկւոյ արասցուք  
մեք ընդ հանդերձս կոփուածով արծաթոյ.  
զի հասանիցեմք այնմ կենացն, որ ոչ  
արք կանայս առնեն, և ոչ կանայք արանց  
լինին. այլ զուգահաւասար հրեշտակք ի  
ցեն և որդիք Աստուծոյ. որ ոչ փոփո-  
խումս պարագրութեանց երկաքանչիւրոցն,  
այլ դատարկութիւն արտունակաց և ըն-  
դունակաց. մտանելոյ յետ յանցանացն  
կրից ի բնութիւնս:

Եւ արդ պարտիւք զասացեալս՝ այսու  
աւրինակաւ զսա զլիւսաւորել, հաւատաս-  
ցուք զի տեսցուք զբարութիւնն. տեսաց  
զբարութիւնն՝ զի հաւատացաք ի խաչ նո-  
րա. ընկալցուք զսպառազնութիւնն, զի  
մարտիցուք. ընդ ժամանակաւ է խաչն. գե-  
ղեցիկ ծառոյն տեսանել. մարմնով՝ ազ-  
գակից և բնութեամբ հասարակ. որ նախ  
քան զմեզ յերկրորդում բուսան. թէ ի Լի-  
բանանէ և կամ յայլոց տեղեաց զտաւ  
նիւթն. յետոյ չարչարանաւքն պատուեալ  
լինի, և տուեալ մեզ որպէս տախտակքն  
ի քարանց առեալ. աստուածային ձեռնա-  
դրութեամբն: Պատուեցաւ և հաշտարանն՝  
յուսկւոյ առեալ երեւմամբն Աստուծոյ ի  
միջոյ ջրովբէիցն պաշտեցաւ. և ոչ ան-  
սկիզբն ի ներքս ասեմք զձեակացն՝ որ ա-  
րեամբ ողջակիզին՝ որ ի վերայ ճմլեցան՝  
երկրպագեցաւ. զոր բերեն մեզ լրտեսքն:  
Մարտիցուք վաղվաղակաւ ուրեմն. մար-  
տեաք՝ զի պատերազմեցաւ ընդ մեզ չարն:  
Ամաչեցաք վասն զի փախտակաւ արար

զմեզ ակոյտեանն. զնացաք անպակաւք, քան-  
զի ոչ մարտեաք աւրինաւք:

Երազը կացաք չարախաւսին. վասն զի  
անկաք ընդ ոտիւք նորա զոր կոխեցին  
նախնիքն մեր: Տկարացան ի զարութեանէ  
աւգնականքն մեր, աւագանն, և թողու-  
թիւնն, և շնորհքն, և արդարութիւնն և  
խաչին զարութիւնն: Բայց զաւրացա-  
լուք տէրամբ. տկարն խրախոյս բարձցէ.  
և միւսն ձեռագիր տացէ անձին Աստուծոյ.  
պատուելով զառաջինն. և զերրորդ ձեռ-  
նադրութիւնն մահու. նախ քան զլուսա-  
ւորութիւնն և զկնի, զաջլաւերեցարուք,  
ատէ՛ք զնշանն սուրբ, ի հեթանոսս. առա-  
քելական առաքինութեամբ վառեալս և  
սպառազնութեամբն պարունակեալ, յու-  
լով անգամ ճակտեալս: Զի խորայէ ոչ  
լքաւ՝ պատերազմեալ ընդ Բենիամինի. թէ-  
պէտեւ այլ խորտակեցաւ՝ մինչև առնոյր  
զյաղթութիւնն: Ետաջնումն իբրեւ զա-  
ռեւծ շրջի կլանել. յերկրորդումն՝ իբրեւ  
զգայլ արարացի յանդգնեալ, քանզի լիրբ  
է գագանն, որպէս ասէ ոմն ի սրբոցն. յեր-  
կրորդումն իբրեւ զձագ խաղալիկ, զոր  
յագեալ ասէ մարգարէն յաղագս ճնճուո-  
ղացն նոցա ձայնիցն առ լաւազն. զի  
զգլուխ նորա ի նաւ եկեղեցւոյ ընկես-  
ցուք. զարդպետութեամբ ձկնորսացն ա-  
սէ, զուրի նորա ի նաւ ձկնորսացն:

Այլ ո՛վ փայտ սուրբ աւրհնեալ՝ խորհըր-  
դածութեամբ աւրինացն տնկեալ, մարգա-  
րէիցն ծաղկեալ, աւետարանին պտղաբե-  
րեալ. զի ընդ՝ իբրեւ կենդանւոյ՝ աղաւ-  
թեմ, ընկալ զոր մատուցի ընդ յերկնէ,  
միանգամայն և յերկրէ և ի ծովէ. և հա-  
ճիցիս ընդ լուսոյ երեկոյին և առաւատին,  
և զոր հրով յաւրոցն զնեմք առաջի քոյ՝  
ուղղելով ընդ նմա զաղաթս մեր, մի՛ վը-  
տանզիցիմք ձայնիւ մարգարէին, ոչ բերել  
խունկս ի Սարայէ: Եւ եղիցի երկրպագու-  
թիւնս մեր քն հանդերձ աստուածութեանն,  
իբրեւ կտոք ծիրանեաւք թագաւորի: Զի  
յերեւել քո երկնից՝ յորժամ կանգնիս. ոչ  
ի վերայ երեք հարիւր վիրաւորաց կամ  
յայլոց բազմութեան, այլ ի բազմութեան  
ազգացն հնազանդելոց աւետարանին. մեզ

հովանի եղիցին թեւք ըր անմարմին. ոչ որպէս էիրն ընդ մեզ շարադրութեամբն յերկիր, այլ յայլ տեսարանով զմեզ յերկինս, լուսաւոր և բոցաճաճանչ փայտ սուրբ, յորժամ յերկնամիջոցն հրճուեացն յարեւելից, զի ժառանգաւորք լիցուք՝ ի վեր անոր յիշելոց պարզեացն, ի Գրիտոս Յիսուս, ի տէր մեր՝ որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

## ՃԱՄԲՈՒ Զ ԳԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

### — Ի ՏԱԼԻՈՅ ՄԷՉ —



1910 Մայիս 5

Վայրաշարժը վնենտրիկէն լիաշոգի կը սուրայ, կառատորմ խոնուած է անզգիացիներով, գերմանացիներով, ֆրանսացիներով, Եւրոպայի բոլոր ժողովուրդներու գրասալը շիկնեցողով, ինձ հագիւ տեղ կը գտնեմ անկիւն մը: Ուղեորութեանց եղանակին դիրքին շէ իտակական ո՛ր է և կառուարոր մէջ աւելի տեղ գրաւել:

Ուղեւորներն ուշադրութեամբ թէղէքէրներ կը խառնեն: Չորս կողմը ոչինչ կայ զարմանալու. մշակուած ու շէն դաշտեր են որ իրարու կը յաջորդեն, իրարու կը կըցուին, և շեշտընթացին արագութեան մէջ կը լուծուին ու կը ձուլուին միապազադ: Անոնք թերեւս իրենց ստրին մէջ որոշել կ'ուզեն թիչ յառաջ տեսած ա՛ և է հեւտաբերական իր մը: Կը վախեն թերեւս մի՛ գուցէ յիշատակ մը հանդերձ իր յիշատակարանովը իոյս ապ իրենցմէ: Իտալիոյ մէջ մարդ արթուն պէտք է ըլլայ. ամենէն անկասկած անկեան մէջ ալ նմայք մը ծածկուած է. ղղիակ մըն է՝ անտառի մը մէջ, արձան մը՝ գեղջկական եկեղեցոյ մը ներսը, Պետրաբոլի մը գերեզման հովտին խորը:

Շեշտընթացը Միլան կը դիմէ. նա անտարբեր կ'անցնի Պատուա, Վիչենցա, Վե-

րոնա քաղաքները: Անորոշները պատուհանները կը դիմեն. մէկ նայուածքով ըստ արեւուած է մարդ ընդգրկել մարդով համայնապատկերներ: Դոնատելլոյ, Պալլադիոս, Վերոնէզէ, Ռոմէօ և Ջուլիէզէ կուզան խառնուիլ իրարու: Շեշտընթացը կը մօտեցնէ մեծ արանագործը մեծ նշկարչին ու ճարտարապետին, — ամէնքն ալ, զանազան ձևերու տակ մեծ սէրը ըրննեցին ու թարգմանեցին:

Խոր գարուն է. բարակ անձրև մը կը ցօղէ. կարդայի լիճը յերեան կու գայ, կանաչութեան ծովը քամիէն կը ծփայ: Մայիսեան համերգ:

Շեշտընթացը կ'անդրաժամարգէ դէպի Միլան:

Լոմբարդիոյ մայրաքաղաքը զիս գրաւեց իր արուարձաններէն իսկ, իր հեռու դաշտավայրերէն: Բուսականութիւնը ինձ հոս աւելի յուսթի և դաշտերը աւելի բարձր երեւցան՝ քան իտալիոյ ուրիշ կողմերը: Սեփական գուարթութիւն մ'ունին տեսակ մը բարձր ու բարձու ծառերու կոլուննադները՝ որոնք մարգակներու շուրջը ճակատ ու պսակ կը կազմեն: Ոչինչ գիտ զայրացուց Միլանի գէջ ընդունելութիւն ընկու: Անոր շուրջը ամէն բան աննշքուցուելու երևոյթն ունի: Եւ մարդ իրեն կը դիմէ ինչպէս դարձող բարեկամուհոյ մը:

Շեշտընթացը քաղաքին մէջ կը մտնէ, ո՛չ գործատուններու քաղաքին մէջ, ուր կը դիզուի արդի շահաստաններուն հարստութիւնն ու աղքատութիւնը: Կառատորմին երկու կողմը արդէն պալատներ են, երկայն, ուղղաձիգ փողոցներ զարդի խառնութիւնով, խուռն բազմութեամբ, հետաքրքիր աչքերով: Ու շեշտընթացը դեռ անվրդով կը յառաջէ, իբր թէ բնական բան մ'ըլլաք, իբր թէ հինգ ժամէ ի վեր նոյն տեսակ փողոցներու միջև վազած ըլլար: Քաղաքը կը կը զեղանի ու կը տարածուի:

Միլան ամենէն աւելի նորածնուած քաղաքն է իտալիոյ: Կայարանէն անցնելուն մարդ կը կարծէ ինքզինք գտնել թիչ մը յառաջ այցելած քաղաքին մէջ, Նոյն ճամ-